կողմից նվէրներ էին հասնում ուղիղ Երևան կամ Փարիզի պատվիրակութեան՝ Հայաստանի համար: Եւ ինչե՞ր ասես չէին ուղարկւում — զինուորական հագուստ ու սարք, դեղօրայք, գրենական պիտոյքներ, ինքնաշարժ, սաւառնակներ, ուտելիք, հագնելիք, ամբողջ գրադարաններ, գրամեքենաներ, ծխախոտ, քինին, բժշկական գործիքներ, նկարներ, զարդարանքներ... Սկսեցին Հայաստանին անել մեծագումար կտակներ, նոր շէնքերի շինութեան խոստումներ, կազմել արդիւնաբերական խոշոր ծրագրներ:

Ցիշենք միայն մի քանիսը, պատահաբար քաղած յիշողութիւնից. Եգիպտոսի գործարանատէր Մելքոնեանը ընդունեց Հայաստանի քաղաքացիութիւնը և իր ամբողջ հարստութիւնը—մի քանի միլիոն դոլար—կտակեց Հայաստանին: Հայաստանին նուիրեց իր փառահեղ տունը Թիֆլիսում — մէկ միլիոն դոլարի արժողութեամբ—յայտնի դրամատէր Ա.Մելիք-Ադարեանը*): Բազուի յայտնի դրամատէր Սրշակ Ղուկասեանի թողած կտակը՝ մօտ 8 միլիոն բուբլու՝ փոխանցուեց Հայաստանին: Ստաւրոպոլի հայ դրամատէր Պոպովը իր ամբողջ հարստութիւնը — մօտ 25 միլիոն բուբլի — կտակեց Հայաստանի համալսարանին: Գ. Գիւլպէնկեանը խոստացել էր Հայաստանում կառուցել մի շարք պետական մեծ շէնքեր: Հ. Մելիքեանը պատրաստում էր շինել Երևանում ժողովրդական Տուն: Պոլսի «Ժող. Ձայն» թերթը օգ. 20-ին հաղորդում էր, որ Հայ Ռամկ. Կուսակցութիւնը Եգիպտոսում որոշել էր Հայաստանին մատուցանել 50 օդանաւ—«Ռամկավար Հայաստանի Օդային Տորմիղը»: Հ. Ց. Դաշնակցութիւնը Ամերիկայում ձեռնարկեց բանակի հանգանակութեան, որը տուեց աւելի քան կէս միլիոն դոլար. Երևան, բանակի համար, ուղարկուեց մեծ քանակութեամբ պաքսիմատ ու պահածոյ: Հայաստանի համալսարանին և Հանրային Գրադարանին նուիրուեցին մի շարք մեծարժէք գրադարաններ — Զոհրաբի, դր. Տաղաւարեանի, Գ. Ցակոբեանի, Կ. Կոստանեանի, Ց. Ցակոբեանի, բանաստեղծ Ա. Ծատուրեանի և այլն: Կարևոր գործ էր և «Մայիլեան Եղբայրների գիտական արշաւախումբը», որը մի շարք մասնագէտների միջոցով նիւթեր էր հաւաքում և ուսումնասիրում Հայաստանի տնտեսական հարստութիւնները: Այսպիսի օրինակներ դեռ կարելի է շատ բերել:

Եւ այս դեռ սկիզբն էր երկանց:

Կային, ի հարկէ, և վատ, չարաշահ տիպեր, որոնք աշխատում էին Հայաստանը շահագործել իրենց անձնական օգտին ու երբ հանդիպում էին կառավարութեան արդելքին, ամէն տեսակ սուտ ու զրպարտութիւններ էին տարածում Հայաստանի վարիչների մասին, մանաւանդ, յաճախ, հոլովելով նրանց ընկերվարական լինելը: Դրանց մասին էր գրում Դ. Անանունը իր թունաւոր տողերը, թէ՝

*) Այդ տունը 1920թ., բոլոր օրինական ձեւակերպութիւնները կատարելուց յետոյ, փոխանցուեց Հայաստանի Հանրապետութեան Թիֆլիսի դիւ. ներկայացուցչութեան, որը պատրաստւում էր տեղափոխել նրա մէջ: Բոլշևիկների գալուց յետոյ, շատերի հետ այդ շէնքն էլ, բռնագրաւուեց և այժմ Հայաստանին չի պատկանում: